ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոհար Սարգսյան

Աստվածաբանական ըմբռնումների ձևավորան գործում դերակատարություն ունեցող ազդակների թվում մեծ տեղ է հատկացվում նաև Փիլոն Ալեքսանդրացու լոգոսի ուսմունքին: Փիլոնի կրոնափիլիսոփայական աշխարհայացքը ձևավորվել է ալեքսանդրիական կրոնական փիլիսոփայության՝ հելլենիստական էկլեկտիկության միջավայրում[1], քանի որ հենց այդ աշխարհաքաղաքացիական միջավայրը «ճանապարհ հարթեց հրեականության և հելլենիստական փիլիսոփայության համադրության համար»[2]: Փիլոնը հունական կրթություն ստացած այն հրեաներից էր, որը ձգտել է այլաբանական մեկնաբանության մեթոդի օգնությամբ Հին Կտակարանի լեզուն թարգմանել հունական փիլիսոփայության լեզվի, որով էլ ծնունդ առավ աստվածաշնչական էկզեգետիկան[3]: Թեև աստվածաբանի ժառանգությունն ինտենսիվ կերպով ուսումնասիրվել է եկեղեցական գործիչների (Կղեմես Ալեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու, Որոգինեսի, Գրիգոր Կապադովկիացու և ուրիշների կողմից), իսկ Հերոնիմոսը համարել է «Սողոմոնի իմաստության հեղինակը»[4], նրա հայեցա-

---

[1] Տե՛ս **Трубецкой С. Н.** Учение о Логосе в его истории; Философско-историческое исследование. М., 2000, с. 109; Տե՛ս նաև **Соколов В. В.** Средневековая философия. М., 1979, с. 23-24.

[2] **История философии** (под. Ред. Г.Ф. Александрова и др.). Т. 1, с. 389.

[3] Տե՛ս **Майоров Г. Г.,** Формирование средневековой философии, с. 47:

[4] Այդ համատեքստում վարկածային պետք է համարել Ժ. Է. Բրունսի և Դ. Թ. Ռունիոյի վերլուծական աշխատանքներում տեղ գտած այն տեսակետը, թե իբր, Փիլոն Ալեքսանդրացին իր «հաստատուն տեղն ունի քրիստոնեության պատմության մեջ, որ նա եղել է «առաքյալների զրուցակիցը, հետագայում՝ սանը», «եկեղեցու առաջին պատմիչը», «առաջին մեկնիչը» և նույնիսկ «Իմաստության գրքերի հեղինակը», տե՛ս **Bruns J. Edg.** Philo Christianus և The Debris of a legend// **"Harvard Theological Review",** 1976, N 66, p. 141-145; **Runio D.T.** Philo Christian Literature: A Survey, Compendia Resum Iudaicarum ad Novum Testamentum, Sec. III, V. 3, Minneapolis, 1993, p. 3-33.

կարգի նկատմամբ վերաբերմունքը տարամետ է և անունը շրջանառվել է նաև Պողոս Սամոսատցու, Արիոսի, Սաբելի, Նեստորի և քրիստոնեական այլ հերձվածների վրա ունեցած խոր ազդեցության առնչությամբ[1]:

Աստվածաբանի ժառանգության կրոնագիտական վերլուծությունը կարևորվում է նաև նրանով, որ «կրոնական և փիլիսոփայական մտքի վրա ունեցած ազդեցությամբ Փիլոնի ուսմունքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև մեր օրերում»: Առավել ևս, որ նրա աշխարհայացքի ձևավորման գործում բացառիկ դեր է կատարել կրոնների և քաղաքակրթությունների խաչմերուկի, հնի և նորի, արևելյան և արևմտյան ուսմունքների հարուստ շտեմարանի համարում ունեցող Ալեքսանդրիայի ինտելեկտուալ միջավայրը, որի պատճառով Փիլոնի ուսմունքը որակվում է որպես «… հելլենիստական մտքի վառ դրսևորում, որպես քրիստոնեությանն ընդառաջ գնացող առաջին դարի մտահայեցողական շարժման կենդանի հուշարձան»[2]:

Կրոնի մեկնաբանության ոլորտում Փիլոնն առաջինն էր, որը դիցաբանական մտածողության համապարփակ արտահայտչամիջոց համարվող այլաբանական մեթոդը կիրառեց Մովսեսի Հնգամատյանի նկատմամբ և փորձեց հիմնավորել այն տեսակետը, թե պատմական շարադրանքով սքողված աշխարհակառույցի գաղտնիքները հասանելի են բացառապես աստվածային շնորհով օժտված նվիրյալներին: Թեև նա եղել է հետևողական միաստվածության և կրեացիոնիզմի հետևորդ, աշխարհայացքային բնույթի բազմաթիվ հարցերի մեկնաբանության գործում հավասարապես օգտագործել է նաև իր ժամանակի փիլիսոփայության սկզբունքները: Փիլիսոփայական կրթությունը նրան թույլ է տվել Հնգամատյանի մարդակերպ և նատուրալիստական դրվագները մեկնաբանել որպես խորհրդապաշտական այլաբանությունների շարք, որտեղ Փիլոնն օգտագործել է նաև պյութագորական, պլատոնական և ստոիկյան փիլիսոփայության հիմնարար ըմբռնումները: Կրոնագիտության տեսանկյունից ուշագրավ է այն, որ Փիլոնի կողմից հինկտակարանային Աստվածը

---

[1] Տե՛ս, օրինակ, **Гусев Д.**, Ересь антитринитаріевъ третяго века, с. 31.

[2] **Трубецкой С. Н.,** Учение о Логосе в его истории; Философско-историческое исследование, с. 109: Հմմտ.՝ **Тихомиров Л. А.,** Религиозно-философские основы истории, с. 173-174.

մեկնաբանվում է հելլենիստական հնչեղությամբ, ինչն էապես մերձենում է փիլիսոփայական աշխարհայացքին:

Աստծու և աստվածային իրերի մասին գիտելիք ձեռք բերելու խորհրդապաշտական էքստազ և գերբնական ինտուիցիայի ուսմունք ձևավորելու համար աշխարհակառույցի հիմնարար հարցերի մեկնության համար Փիլոնը լայնորեն կիրառում է նաև ապոֆատիկ մեթոդը: Ընդ որում, այլաբանական և ապոֆատիկ մեթոդներին համահավասար՝ նա մեծ տեղ է հատկացրել նաև իր ժամանակի փիլիսոփայական ուսմունքներում օգտագործվող անդրանցականության (տրանսցենդենտիզմի) սկզբունքին: Աստվածաբանն այդ դիրքերից է հիմնավորում մատերիական և զգայական աշխարհի հետ հրեական ըմբռնման աստվածային եզակիության հարաբերությունները: Նա Աստծուն բնութագրում է որպես բացարձակ առաջնասկիզբ, որն իր կամքով արարում է աշխարհը և հարաբերվում նրա հետ, պայմանավորում է հայտնությունը, դառնում բոլոր որակների և հատկությունների էության և անսկիզբ ու անվերջ տարածա-ժամանակային որակների հիմնավորման գործում փիլիոնյան աստվածաբանությունը հենվում է աշխահակառույցի մասին պլատոնական և պյութագորական ըմբռնումների վրա[1]:

Ս. Տրուբեցկոյը գտնում է, որ այդ ամենի արդյունքում «... արտաքին պատմությունն այստեղ վերածվում է բարոյական իրադարձությունների ստվերի, **հոգևոր իրավիճակների ինչ-որ այլաբանության:** Հին Կտակարանը դադարում է իր ժողովրդի հետ Եհովայի միության հուշարձան լինելուց և վերածվում է Պլատոնի, Զենոնի, Արիստոտելի և Պյութագորասի հետ միավորող բարձրագույն իմաստության հայտնության (ընդգծումը մերն է՝ Գ.Ս.)»[2]: Համեմատական վերլուծությունը թույլ է տալիս արձա-

---

[1] Այդ իրողություններն ընկած են Ս. Տրուբեցկոյի այն պնդման հիմքում, թե Փիլոնը. «...էկլեկտիկ է գրականության ինչպես նաև փիլիսոփայության մեջ, որը և մտքեր և անմիջական բառեր է փոխառել կինիկներից, ստոիկներից, Պլատոնից, Պոսիդոնից, անգամ՝ սկեպտիկներից», **Трубецкой С. Н.,** Учение о Логосе в его истории; Философско-историческое исследование, с. 113: Համահունչ դիրքերից են հանդես գալիս նաև Գ. Մայորովը, Ա. Տիխոմիրովը և այլ վերլուծաբաններ, տե՛ս **Майоров Г. Г.,** Формирование средневековой философии, с. 47-48; **Тихомиров Л.А. Религиозно-философские основы истории,** с. 180-182; **Гусев Д.**, Ересь антитринитаріевъ третяго века, с. 37-38 և այլն:

[2] **Трубецкой С. Н.,** Учение о Логосе в его истории, с. 127-128.

նագրել այդ մոտեցման օբյեկտիվությունը, քանի որ փիլիոնյան կրոնա-փիլիսոփայական համակարգի համար հիմք են ծառայել «իդեաների» մասին Պլատոնի և «Լոգոսի» մասին ստոիկների ուսմունքները, որոնք սերտորեն շաղկապվել են հուդայական աշխարհընկալումների հետ: Եվ չնայած դրան՝ փիլիոնյան խորհրդապաշտական-ռացիոնալիստական ուսմունքը համակարգված է. «... ունեցել է իր կանոններն ու հիմնավորումները, մասամբ հրեական ռաբիներից, մասամբ՝ հունական քերականներից փոխառնած մեթոդ, որը փոխանցվել է Աստվածաշնչի հետագա մեկնաբաններին և որը մինչ օրս դեռևս ունի իր ազդեցությունը»[1]: Նա այդ դիրքերից է կառուցում նաև Աստված-աշխարհ բազմաստիճան հարաբերությունների մեկնաբանության հիմքում ընկած **միջնորդի ուսմունքը:**

Փիլոնը համամիտ է, որ միջնորդ Լոգոսն իր պատճառական սկզբի՝ բացարձակ Աստծու հետ ոչ մի ընդհանրություն չունեցող էներգիա է կամ Էներգիաների գումար: Ավելի ճիշտ կլինի ասել՝ փիլիոնյան աստվածաբանության մեջ Լոգոսը բնութագրվում է որպես **Աստծու հայտնության իմանենտ, բայց անդեմ ձև, «արարչության և Հայտնության օրգան», «Աստծու միածին Որդի», «բարձրագույն հրեշտակ», «Աստծու առաջին և մեծագույն քահանա», «Արքայության քահանա Մելքիսեդեկ», Աստծո և աշխարհի միջնորդ:** Եվ այդ ամենի ընդհանրացմամբ՝ միջնորդ Լոգոսն որակվում է որպես Աստծու «առաջին քահանա» և «աշխարհի քավիչ», «տիեզերքին նախորդող Աստծուն հավերժորեն մերձեցող իդեաների թագավոր»: Աստվածաբանն ընդունում է, որ **փիլիսոփայության նպատակն Աստծու ճանաչողությունն է:** Բայց քանի որ նրա կողմից մատերիայի և ոգու, զգայական և իդեալական աշխարհների, գիտելիքի և հավատի փոխհարաբերությունը մեկնաբանվում է հակադրության մեջ, համահունչ՝ նա պնդում է, որ մտքի (գիտելիքի) կողմից գերբնականի ճանաչողությունն անհնարին է: Եվ քանի որ արարված աշխարհը փիլիոնյան հայեցակարգում որակվում է որպես «Արարիչ Աստծու մտքի նյութականացում», այդ հիման վրա հաստատվում է, թե **արարման**

---

[1] **Трубецкой С. Н.,** Учение о Логосе в его истории, с. 128: Ըստ էության համահունչ մոտեցում են դրսևորում նաև այլ հեղինակներ, տե՛ս, օրինակ, **Оргиш В. П.,** Античная философия и происхождения христианства, с. 68-69; **Соколов В. В.,** Средневековая филисофия, с. 24.

հոգևոր նախապատկերն առկա է միմիայն աստվածային Լոգոսի մեջ, հետևաբար **միայն նրան է վերապահված Աստծու ճանաչողության հնարավորությունը:**

Աշխարհակառույցի մեկնաբանության գործում առանցքային նշանակություն ունեցող հիմնահարցերի այլաբանական մեկնության գործընթացում հավատը համաձայնեցնելով փիլիսոփայության հետ՝ Փիլոնը «պլատոնականացրեց հուդայականությունը»[1], որի տրամաբանական հանգուցալուծումն էլ հանդիսացավ լոգոսի կրոնափիլիսոփայական միանգամայն նոր ուսմունքը: Նրանում Լոգոսին վերագրվում է այնպիսի միջնորդ դեր, որը «... նախասկզբնական չէ ինչպես Աստված, ոչ էլ ծնված է, ինչպես մենք, այլ գտնվում է այդ ծայրահեղությունների միջև և երկուսին էլ համընկնում է»[2]: Փիլոնի համար Լոգոսը և՛ «Աստծու արտազեղումն» է, և՛ և՛ աստվածային այնպիսի «բարձրագույն ուժ», որն իրենով պայմանավորում է «համաշխարհային կարգ ու կանոնը» և վերահսկում այն: Լոգոսն իր էությունը դրսևորում է որպես «համաշխարհային ոգի», «շարժում», «կենսատու սկիզբ», «ճշմարտության, բարու և գեղեցիկի ակունք»: Բայց պետք է նկատել նաև, որ այս հարցում փիլիոնյան համակարգը հետևողականությամբ աչքի չի ընկնում: Լոգոսը երբեմն ներկայացվում է որպես «դրսևորման մեջ գտնվող Աստված», «երկրորդ աստված», որին վերագրվում է նաև «աստվածային գործունեության» ընդհանրական այլ որակներ[3]: Մյուս կողմից պնդելով, որ **Լոգոսը բխում է նախասկիզբ Աստծուց,** Փիլոնը հուդայական միաստվածության, արարչագործական պատկերացումների, անվերջի և վերջավորի փիլիսոփայական ըմբռնման դիրքերից Աստծուն բնութագրում է որպես անփոփոխ ու անսպառ լույս, որի նկատմամբ լոգոսը ստորադասության մեջ է գտնվում:

Ձգտելով հաշտեցնել, կարելի է ասել անգամ ներդաշնակեցնել աշխարհայացքային համապարփակ հիմնահարցերի փիլիսոփայական և կրոնական լուծումները՝ Փիլոնը հռչակում է **Աստվածաշնչի և հունական փիլիսոփայության անհատականության** դրույթն այն հիմնավորմամբ, թե **երկուսն էլ Լոգոսի ծնունդն են:** Աստվածաշնչում Լոգոսը բացահայտվում է մարգարեներին, իսկ փիլիսոփայության մեջ այն դրսևորվում

---

[1] **Гусев Д.**, Ересь антитринитаріевъ третяго века, с. 35.

[2] **Ранович А. Б.,** О раннем христианстве. М., 1959, с. 264.

[3] **Гусев Д.**, Ересь антитринитаріевъ третяго века, с. 40.

է որպես միտք ու բանականություն: Այդ կապակցությամբ նա գրում է, որ Մովսեսի, Պյութագորասի և Պլատոնի իմաստությունն ունի միևնույն ակունքը, որից բազմազան պատկերացումներ են քաղում նաև բոլոր ժողովուրդները: Անհամապատասխանությունները պայմանավորված են միայն ժողովուրդների գիտակցության մեջ Լոգոսի ուժի ոչ ամբողջական դրսևորումներով[1]: Լոգոսը համարելով Հայր Աստծո առաջնեկ որդի՝ Փիլոնը նրան բնութագրում է «Աստծո մարդ», «երկնային Ադամ», մանանա, հրեշտակ և սուրբգրական այլ եզրերով: Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս նաև փաստել, որ Լոգոսը բնութագրող բոլոր այդ որակներն օգտագործում են **նկարագրական իմաստով:** Ինչ վերաբերում է **Լոգոսի հիմնական հատկանիշին,** ապա աստվածաբանն այն համոզված բնութագրում է որպես **Աստծու և աշխարհի միջև միջնորդ:**

Լոգոսի փիլիոնյան կրոնափիլիսոփայական ուսմունքը որոշակի ազդեցություն է ունեցել նաև քրիստոնեության վրա: Սակայն այս հարցում արմատական վերանայման կարիք ունեն կրոնագիտական որոշ կարծրատիպեր: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Տյուբինգենյան պատմական դպրոցի ջանքերով ձևավորված այն տեսակետին, թե վաղ ջատագովների կողմից Աստված Բանի դոգմատիկական ուսմունքը ձևավորվել է փիլիոնյան հայեցակարգի ազդեցությամբ, որի պատճառով էլ Փիլոնը համարվել է «քրիստոնեության հայրը»[2]: Քրիստոնեության վրա Փիլոնի ուղղակի ազդեցության կանխավարկածը պաշտպանում են նաև XIX-XX դարերի բազմաթիվ վերլուծաբաններ: Այսպես, ռուս եկեղեցագետ և աստվածաբան Ա. Սպասկին գտնում է, որ «ջատագովները Փիլոնից փոխառած Լոգոսի գաղափարը ինքնուրույն կերպով զարգացրեցին

---

[1] Տե՛ս **Майоров Г. Г.,** Формирование средневековой философии, с. 52. Հմմտ.՝ **Чалоян В. К.,** Восток-Запад (преемственность в философии античного и срденевекого общества), с. 79:

[2] Մասնավորապես երիտհեգելական Բրունո Բաուերը XIX դարի 50-ական թվականներին քրիստոնեության դավանաբանության ձևավորման գործում առանձնահատուկ տեղ հատկացնելով Փիլոն Ալեքսանդրացու Լոգոսի տեսությանը, նրան անվանում է «քրիստոնեության հայր»: Այդ տեսակետն ավելի ուշ կրկնում է Ֆ. Էնգելսը և նրա հետևությամբ՝ բազմաթիվ կրոնագետներ, տե՛ս, օրինակ, **Донини А.,** У истоков христианства (от зарождения до Юстиниана), с. 43-44; **Кубланов М. М.,** Возникновение христианства, Эпоха, Идеи, Искания. М., 1974, с. 130; **Свенцицкая И.С.,** Раннее христианство; Странницы истории, М., 1980, с. 43-44 և այլն:

քրիստոնեական ոգով: Նրանք Լոգոսը վերածեցին քրիստոնեական կրոնի առանցքի և այդ մեկնակետից լուսաբանեցին ոչ միայն զուտ կրոնական, այլև պատմամշակութային հիմնահարցերը»[1]:

Սակայն այդ մոտեցումներն անտեսում են սկզբունքային այն փաստը, որ Փիլոնի նպատակը եղել է անտիկ փիլիսոփայության միջոցներով հրեական դավանաբանական սկզբունքների հիմնավորումն, այն դեպքում, երբ քրիստոնեական ջատագովության համար Լոգոսի վարդապետությունը միանգամայն այլ ուղղվածություն ուներ: Կարելի է պնդել նաև, որ ի հակադրություն **աստվածային մեկության և Լոգոսի փիլիոնյան ըմբռնման,** քրիստոնեական Լոգոսի (Բան Աստծու) ուսմունքի միակ և առանցքային սկզբունքը եղել է **երրորդադավանությունը:** Լոգոսի քրիստոնեական ըմբռնման տեսանկյունից որոշակի վերապահումով պետք է մոտենալ և այն տեսակետներին, թե «հունական փիլիսոփայությունից փոխառելով Լոգոսի հասկացությունը՝ ավետարանիչը (Հովհաննեսը՝ Գ. Ս.) քրիստոնեության համար մեծ ձեռքբերում արեց, իսկ հելլենիստական մտքի համար՝ կարևոր զիջում՝ նրան հնարավորություն ընձեռելով շարժվել դեպի կրոնական միաստվածություն»[2]: Բանն այն է, որ «Լոգոս» հասկացության քրիստոնեական ըմբռնումը ոչ միայն հստակորեն նախանշում է սեփական հավատքային դաշտի սահմանները, այլև պատասխան է տալիս մատերիա-Աստված հարաբերության տիեզերաբանական հիմնարար հիմնահարցին: Ճիշտ է, քրիստոնեությունը ևս «տիեզերք», «մարդ», «կրոն» և այլ հասկացողություններին ռացիոնալ բովանդակություն և տրամաբանական բացատրություն է տալիս, բայց դրանք ծառայեցվում են բացառապես հավատի հիմնավորման գործին:

Այդ դիտողությունից հետևում է, որ փաստական հիմնավորում չունի նաև այն տեսակետը, թե «հունական փիլիսոփայության ազդեցությամբ է վաղ քրիստոնեության մեջ հաստատվել այն միտքը, թե ճշմարիտ կրոնն անհնարի է առանց այնպիսի ուսմունքի, որն իր մեջ ընդգրկում է ողջ գիտելիքը»[3]: Անշուշտ, հնարավոր չէ մերժել Լոգոսի փիլիսոփայական և

---

[1] **Спасскій А.,** История догматических движений в эпоху Вселенский Соборов (В связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с. 7.

[2] **Свенцицкая И. С.,** Раннее христианство; Страницы истории, с. 121.

[3] **Оргиш В. П.,** Античная философия и происхождения христианства, с. 146.

կրոնական ուսմունքների ազդեցությունը քրիստոնեական աշխարհայացքի և, հատկապես, աստվածաբանության վրա: Սակայն դա ամենևին էլ միագիծ ազդեցություն, կամ ուղղակի փոխառություն չէ, նախ այն պատճառով, որ անտիկ դիալեկտիկական միտքը Լոգոսը բնութագրում է որպես խոսքի և մտքի անբաժան միասնություն[1]: Այնինչ՝ քրիստոնեության համար Լոգոսը Որդի Աստված է, Աստծու Միածին և Էակից Որդի, կատարյալ Աստված՝ աստվածությամբ և կատարյալ մարդ՝ մարդեղությամբ: Եվ երկրորդ՝ ինչպես փիլիսոփայական, այնպես էլ հուդայական կրոնափիլիսոփայական ըմբռնումը Լոգոսի բնութագրական որակներից է համարում «գիտելիքի տարրերի» առկայությունը[2]: Այնինչ՝ քրիստոնեական Լոգոսը համարվում է «Աստծու Իմաստությունը և Միտքը», որով բարբառվում է «հավիտենական ու անանց աստվածային ճշմարտությունը»:

Չպետք է աչքաթող անել նաև այն, որ փիլիոնյան համակարգը ծառայել է հուդայական Հնգամատյանի աստվածաբանական մեկնաբանության գործին: Եվ այդ համատեքստում պետք է քննարկել փիլիոնականության և քրիստոնեության փոխհարաբերության հարցը: Բանն այն է, որ **ստորադասության հիմքերի վրա կառուցված փիլիոնյան ուսմունքը կարող էր հիմք դառնալ ոչ թե երրորդադավանութան, այլ հակաերրորդաբանական հոսանքների** (էբիոնիզմ, գնոստիկություն և այլն) **համար:** Դա է պատճառը, որը վաղ հակաերրորդաբանական հոսանքների համար ելակետային է եղել Քրիստոսի «անլիարժեք աստվածության» կամ ժամանակային սկիզբ ունենալու տեսակետը: Երկրորդ, եթե փիլիոնյան հայեցակարգերում լոգոսը որակվում է որպես իմացության և գիտելիքների լիակատար ներդաշնակություն, ինչպես նաև հավատի և գիտելիքի միասնություն, ապա քրիստոնեությունը ճշմարտություններին աստվածային ծագում վերագրելով, այն վեր է դասում փորձից և գիտելիքից: Ու թեև Փիլոնի հետևությամբ Կղեմես Ալեքսանդրացին ևս Աստվածաշնչի այլաբանական մեկնաբանությունը համարում է կրոնի մեջ «փիլիսոփայություն ներմուծելու» միակ միջոց, այդուհանդերձ նրանց մոտեցումներում առկա են սկզբունքային տարբերություններ: Փիլոնը հուդայական միաստվածության դիրքերից **Աստծուն բարձր է դասում Լոգոսից, ինչը դասական հակաերրորդաբանություն է:** Իսկ քրիստոնեության համար

---

[1] Տե՛ս **Богомолов А. С.,** Диалектический логос; Становление античной диалектики. М., 1982, с. 28-29.

[2] Տե՛ս նույն տեսում, էջ 29:

Լոգոսն Աստծո Որդին է, Իմաստությունը, Ճշմարտությունը, գաղափարը, Աստծո միտքը: Լոգոսի միջոցով է Աստված արարել աշխարհը և կառավարում է այն[1]:

Հիմնահարցի լուծման գործում անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել և այն փաստը, որ միաստվածության փիլիսոփայական հիմքերը ձևավորվել և հիմնավորվել է հունական դասական փիլիսոփայության շրջանակներում[2] և աստվածաբանությունը, անշուշտ, յուրացրեց և իր նպատակներին ծառայեցրեց այդ ամենը: Եվ ինչպես որ քրիստոնեական աստվածաբանությունը **Լոգոսի իր յուրատիպ մեկնությամբ** մերժեց փիլիոնականությունը, այնպես էլ համահունչ վերաբերմունք որդեգրեց նաև «փիլիսոփայական միաստվածության» նկատմամբ և **միաստվածությունը մեկնաբանեց երրորդադավանության տեսքով:**

Հենց այս հիմնահարցերի շուրջ ծավալված վիճաբանություններն էլ իրենցով պայմանավորեցին վաղ հակաերրորդաբանական հսանքների աստվածաբանական առանձնահատկությունները: Դրանով է փաստվում և այն, որ **հակաերրորդաբանությունը մեկուսի և փակ երևույթ չի եղել:** Այն ձևավորվել է լոգոսի կրոնափիլիսոփայական և փիլիոնյան ըմբռնումների հիման վրա և ուղղակի հակադրվել է եկեղեցական երրորդաբանական ուսմունքին: Նաև դա է պատճառը, որ **վաղ հակաերրորդաբանական հոսանքները տարբեր կոնֆիգուրացիաներով վերարտադրել են հուդայական միաստվածության, Լոգոսի փիլիոնյան և կրոնափիլիսոփայական ըմբռնումների հիմնադրույթները:**

---

[1] Ա. Կարտաշևը, օրինակ, հիմք ընդունելով Հովհաննու Ավետարանի «Սկզբից էր Բանը, եւ բանը Աստծու մօտ էր, եւ Բանը աստուած էր:... Ամէն ինչ նրանով եղաւ» (**Հովհ., 1:1,3**) հատվածը՝ լոգոսի քրիստոնեական ըմբռնումը մեկնաբանում է հետևյալ կերպ. 1) «Սկզբից էր Բանը» նշանակում է, որ լոգոսը հայր Աստծու մեջ գտնվում էր պոտենցիալ կերպով, 2) «եւ Բանը Աստծու մօտ էր»՝ Նա հոր մոտ էր գտնվում ակտիվ արտահայտված ուժի տեսքով, 3) «եւ Բանը Աստուած էր»՝ աստվածայնության անբաժանությունը, 4) «Ամէն ինչ նրանով եղաւ»՝ Նրա բանականությամբ, խոսքով և կամքով: Դրա համար էլ Լոգոսն անբաժանելի և հավերժակից է Հայր Աստծուն, տե՛ս **Карташев А. В.,** Вселенские Соборы. СПб., 2002, с. 53: Եվ այդ համատեքստում ավելի քանի ակնհայտ է, որ Լոգոսի փիլիոնյան և քրիստոնեական ըմբռնումները տրամագծորեն հակադիր են միմյանց:

[2] Պլատոնը, օրինակ, աստվածաբանությունը համարում էր տեսական փիլիսոփայության մի մաս և պնդում, որ այն գործ ունի անշարժ առաջնապատճառի և աստվածների հետ (տե՛ս **Альбин,** Учебник платоновской философии/ **Платон.** Диалоги. М., 1986, с. 438-439): Նա գտնում է նաև, որ Աստված իրական կեցություն է (տե՛ս **Платон.** Законы. М., с. 189/ **Платон.** Соч.).

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոհար Սարգսյան

Բանալի բառեր *- Լոգոս, առաջնապատճառ, միասփվածություն, հակաերրորդաբանություն, համաշխարհային հոգի, հելլենիզմ, էկլեկտիզմ, խորհրդապաշտություն, Մելքիսեդեկ, էբիոնիզմ, գնոստիկություն*

Աշխատանքում լուսաբանվում և կարևորվում են Փիլոն Ալեքսանդրացու ուսմունքի ազդեցությունը կրոնափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորման վրա: Հոդվածում առաջնապատճառի համակարգային վերլուծության հիման վրա ընդլայնվում և համակողմանիորեն քննության են առնվում 3-րդ դարի երրորդաբանական-դոգմատիկ վիճաբանությունները:

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ РЕЛИГИОЗНО-ФИЛОСОФСКОГО МИРОВОЗЗРЕНИЯ ФИЛОНА АЛЕКСАНДРИЙСКОГО

Гоар Саргсян

Ключевые слова *– логос, первопричина, монотеизмб антитринитаризм, Всемирная Душа, элленизм. эклектизм, мистицизм, Мелхиседек, эбионизм, гностицизм*

В статье освещается и оценивается влияние учения Филона Александрийского на формирование религиозно-философского мировоззрения. В статье на основе системного анализа первоисточников раскрываются и всесторонне оцениваются философские основы триодологических-догматичесих споров III века.

SEVERAL FEATURES ABOUT RELIGIOPHILOSOPHICAL WORLDVIEWS OF PHILO PD ALEXANDRIA

Gohar Sargsyan

Keywords *- logos, first cause(principle), monotheism, antitrinitarism, The World Soul, hellenism, Eclectism, Mysticism, Melkisedek, Ebionism, Gnosticism*

The work illustrate and analyzes the influence of doctrine of Philo of Alexandria on the formation of religious and philosophical world-views. On the basis of primary sources the article reveals and comprehensively evaluates the basis for tridological dogmatic disputes of III century.